Հայտարարություն

Ջրային կոմիտեն (այսուհետ՝ Կոմիտե) հայտարարում է Կոմիտեում քաղաքացիական ծառայության հետևյալ ժամանակավոր թափուր պաշտոնը զբաղեցնելու մասին

Հայաստանի Հանրապետության էներգետիկ ենթակառուցվածքների և բնական պաշարների նախարարության ջրային կոմիտեի գույքի կառավարման և ներդրումների իրականացման վարչության պետ (ծածկագիր՝ 18/1-2.1-3):

Հիմնական գործառույթները.

1) ապահովում է գույքի գնահատման և վերագնահատման գործընթացի պարբերաբար իրականացումը.

2) ապահովում է գույքի զարգացման ռազմավարական առաջարկի նախագծի մշակումը, գույքային ներդրումների անհրաժեշտության վերաբերյալ առաջարկությունների նախապատրաստումը, ներդրումային ծրագրերի առաջարկների փաթեթի պատրաստումը.

3) ապահովում է առկա ակտիվների վերականգնման/վերանորոգման վերաբերյալ ջրամատակարարման և ջրահեռացման ծառայություններ մատուցող <<Վեոլիա ջուր>> փակ բաժնետիրական ընկերության (այսուհետ՝ Վարձակալ) առաջարկների վերլուծելությունը, առաջարկության պատրաստումը Կոմիտեին.

4) ապահովում է Վարձակալի կողմից գույքի համալրման/վերականգնման վերաբերյալ առաջարկությունների վերլուծությունը և գնահատումը, Կոմիտեի համար մասնագիտական եզրակացության պատրաստումը.

5) ապահովում է Կոմիտեի ակտիվների տվյալների բազայի վարումը.

6) ապահովում է Կոմիտեի սեփականությունը հանդիսացող խմելու ջրի, ոռոգման ջրի և կոլեկտորադրենաժային համակարգերի գույքի զարգացման ռազմավարական փաստաթղթերի նախագծերի մշակումը.

7) ապահովում է ներդրումային ծրագրերի իրականացումը, տեխնիկատնտեսական ուսումնասիրությունների իրականացման խորհրդատվական ծառայությունների ձեռք բերումը, տեխնիկատնտեսական ուսումնասիրությունների իրականացման տեխնիկական առաջադրանքների մշակումը, անկախ տեխնիկական աուդիտորի աշխատանքների համակարգումը, տեխնիկատնտեսական ուսումնասիրություն իրականացնող խորհրդատուների աշխատանքների ուղղորդումը և համակարգումը.

8) ապահովում է վարձակալական պայմանագրերի կառավարման պարագայում Կոմիտեի ներկայացուցչի լիազորությունների իրականացումը, գնահատում է Վարձակալի կողմից Կոմիտեի ներկայացված պարտադիր կապիտալ աշխատանքների ծրագիրը (ՊԿԱԾ) և առաջարկություն ներկայացնում Կոմիտեի իրականացմանը.

9) ապահովում է Վարձակալին սպասարկման տարածքն ընդլայնելու և կենտրոնացված ջրամատակարման ցանցին չմիացած համայնքները սպասարկման տարածք ներառելու աշխատանքների իրականացման պարագայում օժանդակումը, այդ նպատակով 5 տարվա ներդրումային ծրագրերի առաջարկի մշակումը.

10) ապահովում է կենտրոնացված ջրամատակարարման համակարգին չմիացած համայնքներին՝ համապատասխան սակագների որոշման, ջրամատակարարման մոդուլների ընտրության, ֆինանսավորման աղբյուրներ գտնելու հարցերում աջակցությունը.

11) ապահովում է ընթացիկ, շարունակական, թիրախային մոնիտորինգ գույքի վիճակի գնահատման, շահագործման արդյունավետության, կարիքների, համալրումների բացահայտման, ինչպես նաև առաջընթացի ու զարգացումների գնահատման նպատակով.

12) ապահովում է ավարտված ներդրումային աշխատանքները, նախապատրաստում է ստեղծված ակտիվների կադաստրային գրանցման աշխատանքների գնահատումը.

13) ապահովում է Վարձակալի հաշվետվությունների ընդունումը, գնահատում և տալիս մասնագիտական եզրակացություն Կոմիտեին:

Նշված ժամանակավոր թափուր պաշտոնը զբաղեցնելու համար պահանջվում է՝

բարձրագույն կրթություն, քաղաքացիական ծառայության առաջատար պաշտոնների առնվազն 2-րդ ենթախմբում առնվազն երկու տարվա ստաժ, կամ առնվազն երեք տարվա քաղաքացիական ծառայության ստաժ և քաղաքացիական ծառայության 2-րդ դասի առաջատար ծառայողի դասային աստիճան, կամ վերջին հինգ տարվա ընթացքում քաղաքական կամ հայեցողական, բացառությամբ Հայաստանի Հանրապետության համայնքների ղեկավարների տեղակալների, խորհրդականների, մամուլի քարտուղարների, օգնականների և ռեֆերենտների պաշտոնների, կամ քաղաքացիական պաշտոններում առնվազն երկու տարվա աշխատանքային ստաժ կամ համայնքային ծառայության գլխավոր պաշտոնի առնվազն երեք տարվա աշխատանքային ստաժ, կամ գիտական աստիճան և առնվազն երեք տարվա մասնագիտական աշխատանքային ստաժ, կամ վերջին տասը տարվա ընթացքում առնվազն երեք տարվա մասնագիտական աշխատանքային ստաժ, որից առնվազն մեկ տարին ստորաբաժանման ղեկավարի պաշտոնում, կամ մինչև 2020 թվականի հունվարի 1-ը պետական կառավարման ոլորտի առնվազն երեք տարվա աշխատանքային ստաժ, որից առնվազն մեկ տարին ստորաբաժանման ղեկավարի պաշտոնում.

Հայաստանի Հանրապետության ջրային, Հայաստանի Հանրապետության քաղաքացիական օրենսգրքերի, <<Քաղաքացիական ծառայության մասին>>, <<Պետական կառավարչական հիմնարկների մասին>>, <<Նորմատիվ իրավական ակտերի մասին>> Հայաստանի Հանրապետության օրենքների, Հայաստանի Հանրապետության կառավարության 2003 թվականի մարտի 13-ի <<Հիդրոտեխնիկական կառուցվածքների անվտանգության նորմերի խախտումների ցանկը հաստատելու մասին>> N 286-Ն, 2003 թվականի հուլիսի 31-ի <<Հիդրոտեխնիկական կառուցվածքների անվտանգության հայտարարագրի բովանդակությունը, դրա մշակման և փորձաքննության իրականացման կարգը սահմանելու մասին>> N 957-Ն, 2003 թվականի մայիսի 8-ի <<Հիդրոտեխնիկական կառուցվածքների անվտանգության հսկողության և զննման կարգը սահմանելու մասին>> N 686-Ն, 2003 թվականի ապրիլի 3-ի <<Հակահրդեհային նպատակներով ջրօգտագործման կարգը սահմանելու մասին>> N 390-Ն, 2003 թվականի հունիսի 26-ի <<Բնակարաններում ջրամատակարարման ներքին ցանցերի վթարների և անսարքությունների վերացման կարգը հաստատելու մասին>> N 886-Ն, 2003 թվականի օգոստոսի 28-ի <<Ջրահեռացման համակարգերի օգտագործման և հեռացվող ջրերի մաքրման կանոնները սահմանելու մասին>> N 1228-Ն, 2003 թվականի սեպտեմբերի 17-ի <<Ջրամատակարարման և ջրօգտագործման ոլորտում ապօրինությունների կանխման ու վերացման աշխատանքների

կազմակերպման կարգը հաստատելու և Հայաստանի Հանրապետության 2002 թվականի սեպտեմբերի 5-ի N 1400-Ն որոշման մեջ լրացումներ կատարելու մասին>> N 1278-Ն, 2003 թվականի հունվարի 30-ի <<Պետական սեփականություն հանդիսացող ջրային համակարգերի օգտագործման իրավունքի վարձակալությամբ փոխանցման կարգը հաստատելու մասին>> N 243-Ն, 2003 թվականի մարտի 13-ի <<Հիդրոտեխնիկական կառուցվածքների դասակարգումը հաստատելու մասին>> N 235-Ն, 2005 թվականի հուլիսի 28-ի <<Ջրերի ստանդարտների սահմանման կանոնակարգերի մասին>> N 1147-Ն որոշումների և իր լիազորությունների հետ կապված իրավական այլ ակտերի անհրաժեշտ իմացություն.

անհրաժեշտ տեղեկատվության տիրապետում.

տրամաբանելու, տարբեր իրավիճակներում կողմնորոշվելու ունակություն,

համակարգչով և ժամանակակից այլ տեխնիկական միջոցներով աշխատելու ունակություն,

անհրաժեշտ (պարտադիր) կառավարչական հմտությունների և ունակությունների, ինչպես նաև քաղաքացիական ծառայության պաշտոնի անձնագրով նախատեսված գործառույթներից բխող կառավարչական հմտությունների և ունակությունների (Ցանկեր N 1-2) տիրապետում:

Նշված ժամանակավոր թափուր պաշտոն զբաղեցնելու ժամկետը սահմանվում է և ժամկետային աշխատանքային պայմանագիրը կնքվում է մինչև ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով ժամանակավոր թափուր պաշտոն առաջանալու հիմքի վերացումը:

Աշխատավարձը՝ «Պետական պաշտոններ և պետական ծառայության պաշտոններ զբաղեցնող անձանց վարձատրության մասին» ՀՀ օրենքի համաձայն կազմում է 310858 (երեք հարյուր տասը հազար ութ հարյուր հիսունութ) ՀՀ դրամ:

Աշխատանքի վայրը՝ ք. Երևան, Վարդանանց 13ա, հեռ (010) 540613, էլեկտրոնային փոստի հասցե (scws@scws.am):

Դիմող ՀՀ քաղաքացիները պետք է ներկայացնեն հետևյալ փաստաթղթերը.

•դիմում՝ Կոմիտեի նախագահի անունով (դիմումի ձևը կցվում է),

•տվյալ պաշտոնը զբաղեցնելու համար մասնագիտական գիտելիքների և աշխատանքային ունակությունների տիրապետման տեսանկյունից ներկայացվող պահանջների բավարարումը հավաստող փաստաթղթերի՝ դիպլոմ (ների), վկայական (ների), աշխատանքային գրքույկի (վերջինիս բացակայության դեպքում անհրաժեշտ է ներկայացնել տեղեկանք համապատասխան մարմնից) լուսապատճենները,

•արական սեռի անձինք՝ նաև զինվորական գրքույկի կամ դրան փոխարինող ժամանակավոր զորակոչային տեղամասին կցագրման վկայականի լուսապատճենը կամ համապատասխան տեղեկանք,

• սոցիալական ապահովության քարտի կամ սոցիալական ապահովության քարտ չունենալու մասին տեղեկանքի կամ հանրային ծառայության համարանիշի կամ հանրային ծառայության համարանիշ չունենալու մասին տեղեկանքի լուսապատճենը.

•անձնագրի կամ նույնականացման քարտի լուսապատճենը,

•մեկ լուսանկար 3x4 սմ չափսի,

ՀՀ քաղաքացիները փաստաթղթերը հանձնում են անձամբ (հասցե՝ ք. Երևան, Վարդանանց 13ա) կամ էլեկտրոնային փոստի (scws@scws.am) միջոցով:

Փաստաթղթերն ընդունվում են ամեն աշխատանքային օր, ժամը $09^{30}$-$12^{30}$-ը:

Դիմումների ընդունման վերջին ժամկետն է՝ 13 օգոստոսի 2020թ.:

Ջրային կոմիտեի նախագահ

պարոն Կարեն Սարգսյանին

_____

դիմողի անունը, հայրանունը, ազգանունը

_____

դիմողի հաշվառման հասցեն

_____

դիմողի բնակության հասցեն

_____

դիմողի անձնագրի տվյալները, հեռախոսահամարը

_____

ԴԻՄՈՒՄ

Ծանոթանալով Ջրային կոմիտեի կողմից հրապարակված հայտարարությանը՝ խնդրում եմ Ձեզ Հայաստանի Հանրապետության էներգետիկ ենթակառուցվածքների և բնական պաշարների նախարարության ջրային կոմիտեի գույքի կառավարման և ներդրումների իրականացման վարչության պետի (ծածկագիր՝ 18/1-2.1-3) ժամանակավոր թափուր պաշտոնը զբաղեցնելու նպատակով ինձ հետ կնքել ժամկետային աշխատանքային պայմանագիր:

Միաժամանակ հայտնում եմ, որ՝

1. հայերենին_____

(տիրապետում եմ, չեմ տիրապետում)

2. դատական կարգով անգործունակ կամ սահմանափակ գործունակ _____

(ճանաչվել եմ, չեմ ճանաչվել)

3. սահմանված կարգով չհանված կամ չմարված դատվածություն _____.

(ունեմ, չունեմ)

4. կառավարության որոշմամբ հաստատված հիվանդությունների ցանկում ընդգրկված հիվանդություններից որևէ մեկով _____.

(տառապում եմ, չեմ տառապում)

5. Անձամբ ձեռնարկատիրական գործունեությամբ _____

(զբաղվում եմ, չեմ զբաղվում)

6. Անմիջական ենթակայության կամ վերահսկողության տակ մերձավոր ազգակցական կամ խնամիական կապերի (ծնող, ամուսին, զավակ, եղբայր, քույր, ամուսնու ծնող) մեջ _____ _____

(գտնվում եմ, չեմ գտնվում)

7. տիրապետում եմ հետևյալ համակարգչային ծրագրերին՝

☐ Windows, ☐ Word, ☐ Excel, ☐ Access, ☐ Power Point, ☐ այլ.

8. տիրապետում եմ հետևյալ օտար լեզուներին՝

_____

(տիրապետում եմ ազատ, կարդում և կարող եմ բացատրվել)

_____

(տիրապետում եմ ազատ, կարդում և կարող եմ բացատրվել)

Կից ներկայացնում եմ հետևյալ փաստաթղթերի լուսապատճենները՝

1. անձնագրի լուսապատճենը՝ _____ էջ.
2. նույնականացման քարտի լուսապատճենը՝ _____ էջ.
3. դիպլոմ(ներ)ի լուսապատճեն(ներ)ը՝ _____ էջ.
4. աշխատանքային գրքույկի լուսապատճենը՝ _____ էջ.
5. զինվորական գրքույկի լուսապատճենը՝ _____ էջ.
6. սոցիալական քարտի կամ հանրային ծառայության համարանիշի տեղեկանքի լուսապատճենը՝ _____ էջ.
7. այլ՝ _____ էջ:

Նախազգուշացված եմ՝ քաղաքացիական ծառայության ժամանակավոր թափուր պաշտոնում նշանակվելու և ժամկետային աշխատանքային պայմանագիր կնքելու դեպքում, կեղծ տվյալներ և փաստաթղթեր ներկայացնելու համար, զբաղեցված պաշտոնից ազատվելու և ժամկետային աշխատանքային պայմանագիրը լուծելու, սահմանված կարգով պատասխանատվության ենթարկվելու մասին:

Դիմող՝ _____ (_____)

(ստորագրություն) (անուն, ազգանուն)

_____

(օրը, ամիսը, տարին)